Հրապարակման ենթակա չէ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**
Գեղամ Վարդանյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
Սինգապուրի Հանրապետություն (Սինգապուր), 2019թ. նոյեմբերի 10-ից 14-ը:

4. **Հրավիրող կողմը.**
Սինգապուրի Հանրապետություն:

5. **Գործուղման նպատակը.**
«Սինգապուրյան նորարարությունների և տեխնոլոգիաների շաբաթ» (SWITCH 2019) համաժողովին ու ցուցահանդեսին մասնակցություն:

6. **Քննարկված թեմաները**
Համաժողովի ընթացքում նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյանը Սինգապուրի տարբեր պաշտոնյաների հետ քննարկել է Հայաստանի և Սինգապուրի միջև բարձր տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության հեռանկարները, ոլորտի զարգացման գործում երկու պետությունների փորձը, ինչպես նաև կոնկրետ ծրագրերի իրագործման հնարավորությունները:
Առանձնակի ուշադրություն է գրավել հայկական տաղավարը, որով մի շարք ոլորտային հայկական ընկերություններ միջազգային հանրությանն են ներկայացրել իրենց արտադրանքը, նախատեսվող ծրագրերը, համագործակցության համար հնարավոր նախագծերը և դրանց շնորհիվ նոր շուկաներ մուտք գործելու հեռանկարները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
ՀՀ ԲՏԱ նախարարի տեղակալ Գ. Վարդանյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպել է Սինգապուրի Հանրապետության կառավարության ավագ նախարար Չէ Հոնգ Տատի հետ: Ողջունելով հյուրերին՝ նախարար Տատը նշել է, որ Սինգապուրում հիշում և գնահատում են հայկական համայնքի անգնահատելի դերը և նշանակությունը պետության առաջընթացի և զարգացման գործում: Այնուհետև Տատը ավելացրել է, որ Սինգապուրը պատրաստ է խորացնել

հարաբերությունները Հայաստանի հետ, մասնավորապես՝ կրթական, արդյունաբերական և առևտրային ոլորտներում: Գ. Վարդանյանը, շնորհակալություն հայտնելով հանդիպման համար, ներկայացրել է հայկական տեխնոլոգիական ոլորտում իրականացված և տեսանելի ապագայում իրականացվելիք ծրագրերը: Մասնավորապես՝ ներկայացվել է դպրոց-արդյունաբերություն ձևավորված շղթան, որի շրջանակներում առանձնացվել են «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը, «ԱՐՄԱՏ» և «ԱՆԵԼ» ինժեներական լաբորատորիաները, և որպես վերջնարդյունք դիտարկվել է պատրաստի մասնագետի մուտքը ոլորտային աշխատաշուկա:

Նախարարի տեղակալ Գ. Վարդանյանը հետաքրքրվել է, թե որ մակարդակում են մշակվում և ընդունվում ռազմավարական զարգացման ծրագրերն ու հեռանկարային նախագծերը: Նախարար Տատը տեղեկացրել է, որ նմանօրինակ ծրագրեը մշակվում են համատեղ՝ համալսարանների գիտական հետազոտական ընկերությունների և կառավարության մյուս շահագրգիռ կողմերի հետ միասին, որից հետո նախարարն ընդունում է որոշումը: Որոշման ընդունումից անմիջապես հետո պետական մյուս ինստիտուտների կողմից սկսվում է որոշմանն իրավական ձևաչափի տրման գործընթացը:

Նախարար Տատը հայկական պատվիրակության հետ քննարկել է նաև կառավարության համար առաջնահերթ հանդիսացող մարտահրավերները: Խոսելով համալսարաններում կրթական ծրագրերի արդիականության և հետագայում նրանց կիրառելիության մասին՝ Տատը նշել է, որ արդի տեխնոլոգիական զարգացումը տեղի է ունենում մեծ արագությամբ և ժամանակակից տնտեսության պահանջներն էլ, համապատասխանաբար, փոխվում են, ուստի անհրաժեշտ է որակավորված մասնագետների գիտելիքների մշտական թարմացում: Այդ նպատակով Սինգապուրի կառավարությունը, սկսած արդեն համալսարաններից, ապագա մասնագետների մեջ սերմանում է այն համոզմունքը, որ կրթվելը չի կարող ավարտվել համալսարանի հետ, և այն շարունակական գործընթաց է, որը պետք է ընթանա մինչև կյանքի վերջ: Այս նպատակով տարվա մեջ 2-3 անգամ ոլորտային մասնագետների համար կազմակերպվում և իրականացվում են սեմինար-դասընթացներ՝ տեխնոլոգիական ոլորտի նորարար լուծումներին ծանոթացնելու և նրանց բարձր որակավորումը պահպանելու համար: Նշվել է նաև, որ պետությունը ֆինանսավորում է սեմինար-դասընթացի գումարի 90%-ը, իսկ գործատու կազմակերպությունը՝ մնացած 10%-ը:

Նախարարի տեղակալ Վարդանյանը շնորհակալություն է հայտնել իր գործընկերոջը փորձի փոխանակման և համագործակցության պատրաստակամության համար և հավելել, որ շուտով կտրամադրի այն ամբողջական տեղեկատվությունը, որն անհրաժեշտ կլինի՝ ձեռք բերված պայմանավորվածություններն ի կատար ածելու համար:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյանը հանդիպում է ունեցել նաև Սինգապուրի առևտրի և արդյունաբերության նախարար Կոհ Պո Կունի հետ: Գ Վարդանյանը նախ ներկայացրել է ԲՏԱ նախարարության կառուցվածքը, սահմանված առաջնահերթությունները, այնուհետև ներկայացրել, թե ինչու է Հայաստանը տարածաշրջանի առաջատար պետություններից մեկը ՏՏ ոլորտում (մասնավորապես խոսելով Խորհրդային Միության ընթացքում հիմնված գերազանց գիտական ավանդույթների

մասին), ինչպես նաև ներկայացրել է Հայաստանի SS ընկերությունների ներուժը և այն ոլորտները, որոնց շրջանակներում նրանք աշխատում են: Այնուհետև ամփոփ ներկայացվել է Սինգապուր ժամանած հայկական կազմակերպությունների ոլորտային գործունեությունը:

Նախարար Կոհ Պո Կունը, շնորհակալություն հայտնելով իր գործընկերոջը, ներկայացրել է Սինգապուրի փորձն օտարերկրյա ներդրումների ներգրավման ոլորտում, ինչպես նաև տարբեր երկրների գործընկերների հետ աշխատանքի շրջանակներն ու ձևաչափը: Մասնավորապես ներկայացնելով առևտրային ներկայացուցչությունների դերը և նշանակությունը համագործակցությունը խորացնելու և ընդլայնելու գործում՝ ներկայացվել է այն ձևաչափը, որի շրջանակներում գործում են աշխարհի տարբեր երկրներում սինգապուրյան առևտրային ներկայացուցչությունները:

Գեղամ Վարդանյանը, որպես հատուկ հյուր, մասնակցել է նաև Սինգապուրում ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի «Cultivate» նախաձեռնության մեկնարկին, որտեղ հանդես է եկել ելույթով: Նա անդրադարձել է մեր երկրում իրականացվող ստարտափ էկոհամակարգի զարգացմանն ուղղված ծրագրերին, խոսել միջազգային ստարտափ լուծումները Հայաստանում ներդնելու և հայկական փորձը արտահանելու հնարավորությունների մասին: Նախարարի տեղակալը ներկայացրել է նաև ՀՀ կառավարության տեսլականը. Հայաստանը տարածաշրջանում տեխնոլոգիական կենտրոնի վերածել ու ապահովել դրա կայուն զարգացումը:

Միջոցառման ողջ ընթացքում ակտիվ աշխատել և այցելուներին է գրավել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հովանու ներքո ներկայացված հայկական միասնական տաղավարը, որին մասնակցել են Հայաստանում և տարածաշրջանում բավականին արագ առաջընթաց գրանցած մի շարք մասնագիտական ազգալի առաջընթաց գրանցած ընկերություններ. «Quality Testing Lab», «ERA Technologies LLC», «Expper Technologies», «The Gurus LLC», «AddDevice LLC», «DevNet», «EasyDMARC», «YEA Engineering»:

Ցուցահանդեսի վերջին օրը հայկական ընկերությունների ներկայացուցիչները հանդես են եկել առանձին շնորհանդեսներով՝ ներկայացնելով իրենց ընկերությունների արտադրանքն ու ծառայությունները:

Տաղավարը ոչ միայն մեծ հետաքրքրություն է առաջացրել ոլորտային կազմակերպությունների և կրթական ինստիտուտների շրջանակում, այլև հասցրել է գրավել մեծ թվով բարձրաստիճան պաշտոնյաների ուշադրությունը, ովքեր նորովի են բացահայտել Հայաստանի շարունակաբար աճող կարողություններն ու ներուժը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Սինգապուրի Հանրապետության կառավարության ավագ նախարար Չէ Հոնգ Տատի հետ հանդիպման ժամանակ Գ. Վարդանյան առաջարկել է համագործակցություն ծավալել հայկական և սինգապուրյան տեխնոլոգիական համալսարանների միջև՝ նպատակ ունենալով իրականացնել ուսանողական փոխանակման, հետազոտական և փորձագիտական նախագծեր: Նախարար Տատը

ողջունել է առաջարկը և մատնանշել այն տեխնոլոգիական համալսարանները, որոնց հետ հնարավոր է համագործակցություն սկսել. «National University of Singapore», «Nanyang Technologiacal University», «Singapore University of Technology and Design»:

Նախարար Տատն ավելացրել է, որ Սինգապուրի Հանրապետությունում, մասնավորապես՝ կրթության ոլորտում, ակտիվ գործունեություն են ծավալում նաև հետազոտական և գիտական ընկերությունները: Ի հավելումն՝ Տատը նշել է, որ պետք է քայլեր ձեռնարկել՝ մեծացնելու համար համագործակցության մասշտաբները, և համագործակցության շրջանակում ընդգրկել նաև նշված հետազոտական ընկերությունները.

1. «National Research Foundation Singapore»,
2. «Institute for Infocomm Research»,
3. «Singapore Institute for Clinical Sciences (SICS)»,
4. «Centre for Quantum Technologies»,
5. «Singapore Institute of Manufacturing Technology (SIMTech)»,
6. «Institute of High Performance Computing»:

Սինգապուրի առևտրի և արդյունաբերության նախարար Կոհ Պո Կունը առաջարկել է Սինգապուրում հիմնել առևտրային ներկայացուցչություն, որը կօգնի պայմաններ ստեղծել հայկական կազմակերպությունների համար՝ աշխատելու ոչ միայն Սինգապուրում կապիտալ ունեցող կազմակերպությունների, այլ նաև Սինգապուրի կառավարության հետ: Ի պատասխան՝ Գ. Վարդանյանը նշել է, որ Հայաստանը շահագրգռված է զարգացնել համագործակցությունը Սինգապուրի Հանրապետության հետ և պատրաստ է աշխատել՝ առաջարկը կյանքի կոչելու համար: Հայկական պատվիրակությունը պատրաստակամություն է հայտնել փոխշահավետ համագործակցության հնարավորություններ ստեղծել Սինգապուրի մի շարք կազմակերպությունների (օր.՝ «ST engineering», «ASTAR») և հայկական կազմակերպությունների միջև: Սինգապուրյան կողմը խոստացել է փոխանցել անհրաժեշտ անձանց կոնտակտային տվյալներ, որոնց միջոցով հնարավոր կլինի մեկնարկել համագործակցությունը:

Հայկական տաղավարով ներկայացած գրեթե բոլոր ընկերությունները պայմանավորվածություններ ձեռք բերեցին՝ հետագա համագործակցության ուղղությամբ քննարկումներ մեկնարկելու և դրանք զարգացնելու վերաբերյալ: Մասնավորապես՝ «Quality Testing Lab» ընկերությունը հուշագիր է ստորագրել «Airome» ընկերության հետ, որը ֆինանսական ծառայություններ է իրականացնում Ռուսաստանում, Սինգապուրում, Ինդոնեզիայում և Մալազիայում: Այն աշխատում է աշխարհի 700-ից ավել բանկային կազմակերպությունների հետ: «Quality testing lab» ընկերությունն իրականացնելու է դրա ողջ արտադրանքի թեստավորումը:

Եվս մեկ համագործակցության հուշագիր է ստորագրվել «EasyDMARC» ընկերության և «HEAPSTECH» կոնսորցիումի հետ՝ Սինգապուրի շուկայում բիզնեսն ընդլայնելու համար: Կոնսորցիումն օգտագործում է համագործակցային մոտեցում և ստանդարտ գործարկային մոդել՝ հետևողականորեն համատեղելու ցանկացած քանակի տեխնոլոգիական ընկերությունների, հեշտացնելու ծրագրային ապահովման և ծառայությունների մատակարարումը Ասիա-

Խաղաղօվկիանոսյան Հավատարմագրային Համագործակցության կազմակերպության տարածքում:

Հայկական «Varpet»-ը, որն առցանց կենցաղային ծառայությունների մատուցման հարթակ է, համագործակցության հուշագրեր է ստորագրել «SunMedia», «Capsys», «Warrantec», «Hal34K», «KFW» ընկերությունների հետ՝ իր համակարգը Ճապոնիայում, Սինգապուրում, Գերմանիայում և Հունգարիայում գործարկելու վերաբերյալ:

Հայկական «Gurus» ընկերությունը փոխադարձ համաձայնություն է ձեռք բերել «Roterdam Partners»-ի և «MDEC»-ի հետ՝ տվյալների մշակման և վերլուծության ուղղությամբ համագործակցելու վերաբերյալ:

«Davnet» ընկերությունը համագործակցության պայմանավորվածություն է ձեռք բերել «Azunaro» և «Johannes Thordason» ընկերությունների հետ, իսկ «YEA Engineering»-ը քննարկել է Սինգապուրում համալսարանների հետ համագործակցության հնարավորությունները:

«SWITCH 2019»-ի շրջանակներում ձեռք են բերվել 100-ից ավել պայմանավորվածություններ՝ հայկական ընկերությունների հետ հետագա համագործակցությունը քննարկելու վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Գեղամ Վարդանյան
18.11.2019թ.